Հավելված N2
Երևանի քաղաքապետի
«10» 12.2021 թ.
h.4385-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Երևանում Ալբերտ Ազարյանի անվան նոր մարզական կառույցի իրականացման աշխատանքները կազմակեպելու նպատակով ստեղծվող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննարկելու է Երևանի քաղաքապետարանի կողմից որպես նախագծման աշխատանքների առաջին փուլ հայտարարված Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքի ստորոտում, Հրազդանի ձորում գտնվող մարզական գոտու «Հրազդան» մարզադաշտին հարակից՝ հյուսիս-արևմտյան հատվածում նոր մարզական կառույցի ճարտարապետական հայեցակարգի բաց հրապարակային մրցույթին ներկայացված առաջարկները, ընտրվելու են մրցույթի պահանջներին և պայմաններին հնարավորինս բավարարող լավագույն և նպատակահարմար լուծման տարբերակները: Մրցույթի արդյունքների ամփոփմամբ ընտրված առաջարկների օգնությամբ, ձևավորվելու է հստակ տեխնիկական առաջադրանք և գնումների գործընթացով կազմակերպվելու է կառույցի երկրորդ փուլի նախագծային աշխատանքների մրցույթը:

2.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Մրցույթին ներկայացված առաջարկների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը (պահպանելով մասնակիցների գաղտնիությունը), ծրարների բացումը և արդյունքների ամփոփումը հանձնաժողովի նիստում,

2) Մրցույթի արդյունքներն ամփոփելով սահմանված առաջին, երկրորդ տեղերի մրցանակների տրամադրումը և առաջին տեղի մրցանակակրին (առավելագույն միավորներ հավաքած) հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունումը,

3) Մրցույթի արդյունքների հրապարակումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5.Հանձնաժողովը որոշում է նիստերի վայրը, օրը և ժամը, մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը (կանոնակարգը զետեղվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում), գնահատման կարգը, մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետը և այլն:

6.Հանձնաժողովի կողմից արդեն ընդունված մրցութային աշխատանքները ներկայացվում են մրցույթի կազմակերպչի կողմից նշված հասցեով (ք.Երևան, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի փողոց h.1)

7.Նիստերն անցկացվում են հանձնաժողովի կողմից հաստատված ծանուցմամբ նախատեսված օրերին, ժամերին և վայրերում:

8.Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Հանձնաժողովը որոշումներն ընդունում է անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Մրցույթում նախատեսված է երկու մրցանակային տեղ՝ առաջին, երկրորդ: Հաղթող է համարվում առավելագույն միավորներ հավաքած առաջին տեղի մրցանակակիրը:

10. Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 մլն ՀՀ դրամ, որից՝

- առաջին մրցանակ՝ 2 մլն ՀՀ դրամ,
- երկրորդ մրցանակ՝ 1 մլն ՀՀ դրամ:

11. Մրցույթին ներկայացված աշխատանքների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը, ծրարների բացումը, ամփոփումը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից նախատեսված օրը, ժամին և վայրում:

12. Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում և արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

13. Հանձնաժողովի անդամները գնահատում են քննարկվող առաջարկները՝ լրացնելով գնահատման թերթիկը: Յուրաքանչյուր առաջարկ գնահատվում է 10 բալային համակարգով:

14. Մրցութային աշխատանքները գնահատվելու են ըստ հետևյալ չափորոշիչների՝ ֆունկցիոնալություն, նորարարություն, պատմական միջավայրի հետ ներդաշնակություն, իրագործման իրատեսություն:

15. Ներկայացված առաջարկներից հանձնաժողովն ընդունում է որոշում առաջին տեղի մրցանակակրին (առավելագույն միավորներ հավաքած) հաղթող ճանաչելու վերաբերյալ և հրապարակում մրցույթի արդյունքները:

16. Մրցույթի առաջին, երկրորդ տեղերի մրցանակակիրներին դրամական պարգևները փոխանցվում են մասնակիցների կողմից նախապես տրամադրված բանկային հաշվին՝ մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Մրցույթում առաջին, երկրորդ տեղերի մրցանակներ ստացած մրցութային աշխատանքները հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը: Երևան համայնքը իրավունք է ձեռք բերում այդ մրցութային աշխատանքները ցանկացած ձևով տնօրինել իր հայեցողությամբ՝ առանց նախապես համաձայնեցնելու դրանք հեղինակների հետ:

18. Մրցույթում առաջին, երկրորդ տեղերի մրցանակներ ստացած մրցութային աշխատանքները տեղադրվում են Երևան քաղաքապետարանի էլեկտրոնային կայքում, ենթակա են ցուցադրման և հրապարակման:

19. Դրամական պարգևը ներառում է հարկերը, որոնք հետագայում սահմանված կարգով կգանձվեն վճարվելիք գումարներից:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

20. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

21. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.
2) լրացնում է գնահատման թերթիկը.
3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

22.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ.

2)պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.

3)ապահովում է մրցութային առաջարկների գնահատման թերթիկների պատրաստումը.

4) մրցութային առաջարկները տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.

5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին.

7) բոլոր ստացած փաթեթներին տալիս է ծածկագրեր և համոզվում, որ պաստառի վրա առկա չեն ներկայացված աշխատանքի հեղինակին/ներին նույնականացնող նշումներ: Ընդ որում միևնույն փաթեթով ներկայացված պաստառի և տեղեկատվական թերթիկի ծածկագրերը պետք է համապատասխանեն միմյանց:

8) իրականացնում է մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցումը

7. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

23. Հանձնաժողովի քարտուղարը սույն որոշման կայացումից 3 օրվա ընթացքում www.yerevan.am կայքում և այլ միջոցներով իրականացնում է մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցում, հետևյալ բովանդակությամբ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԲԱՐՁՈՒՆՔԻ ՍՏՈՐՈՏՈՒՄ, ՀՐԱԶԴԱՆԻ ՁՈՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՏՈՒ «ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ՝ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ»

Մրցույթի նպատակը.

1. Տարածական պլանավորողների, ճարտարապետների, լանդշաֆտի նախագծման ոլորտի փորձագետների, մասնագետների ստեղծագործական գործունեության համար, խթան ստեղծելով, որպես նախագծման առաջին փուլով ձեռք բերել նոր գաղափարներ, յուրահատուկ, լավագույն հայեցակարգ-նախագծեր, որոնց քննարկման, ընտրության և ամփոփման արդյունքները հնարավորություն կտան բազմակողմանի և մասնագետների առավել լայն շրջանակների առաջարկների օգնությամբ, ձևավորել հստակ տեխնիկական առաջադրանք և գնումների գործընթացով կազմակերպել սպորտային գիմնաստիկայի նոր մարզակառույցի երկրորդ փուլի նախագծային աշխատանքների մրցույթը

2. Ակնկալվում է ստանալ կից տրամադրվող հատակագծում՝ Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքի ստորոտում, Հրազդանի ձորում գտնվող մարզական գոտու «Հրազդան» մարզադաշտին հարակից՝ հյուսիս-արևմտյան հատվածի նշված տարածքի ընդհանրական լանդշաֆտի կազմակերպման առաջարկներ և այդ կոնտեքստում կոնկրետ մարզակառույցի ծավալի առաջարկվող հորինվածքային լուծումներ:

3. Սպորտային գիմնաստիկայի նորակառույցն իրականցնելու միջոցով համալրել և բարելավել սպորտային մարզական գոտու միջավայրը, ունենալ տվյալ գործառնական

նշանակությունը վերածնող, առկա քաղաքաշինական կազմավորումները, պատմշակութային ժառանգություն հանդիսացող օբյեկտները չխաթարող մարզական միավոր:
4. Հասարակության սոցիալական կյանքի զարգացման, ոլորտի շահառուների համար էկոլոգիապես կայուն, հարմարավետ տարածություն ստեղծել:

Գաղափարը.

Երևան քաղաքում ֆիզիկական կուլտուրայի և առողջության, մարզական ոլորտի զարգացման, սպորտային գործառույթների կազմակերպման պայմանների բարելավման անհրաժեշտությամբ պայմանավորված «Հրազդան» մարզադաշտի մոտ՝ սպորտային գոտին զարգացնելով, նույն գործառնական նշանակությամբ նոր մարզակառույց իրականացնել: Մրցույթի միջոցով ստանալ մարզակառույցի ծավալատարածական՝ ճարտարապետական և հատակագծային լուծման հայեցակարգային առաջարկներ, որոնցում իրագործվելիք նոր ծավալը համահունչ ինտեգրվելով տվյալ լանդշաֆտային միջավայրում տրանսպորտային, ինժեներական ու հանգստի ենթակառուցվածքային կապերով առավել գրավիչ, մարզական կյանքի վերածնված, կազմակերպված տարածքի ստեղծման հնարավորություն կտա:

Մասնակցության պայմանները.

Մրցույթին ներկայացված աշխատանքների քննարկումը, գնահատումը, արդյունքների ամփոփումը և որոշման ընդունումը կատարվում է մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն:

Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք և անձանց խմբեր՝ (ուսանողներ, անհատ ճարտարապետներ և այլն), ինչպես նաև իրավաբանական անձինք՝ ճարտարապետական նախագծային կազմակերպություններ:

Մրցութային փաթեթներն ընդունվում են մրցույթի հրապարակման օրվանից 45 օրյա ժամկետում:

Մրցութային փաթեթները ներկայացվում են մրցութային հանձնաժողովի քարտուղարին, որն ստորագրությամբ ընդունում է փաթեթը, մասնակցին՝ տրամադրելով ստացական:

Մրցույթը բաց է և անցկացվում է մեկ փուլով:

Առաջարկների ներկայացման վերջնաժամկետ.

Ոչ ուշ քան մրցույթի հրապարակային ծանուցումից 45 աշխատանքային օր հետո /2021թ.՝ ամիսը, օրը, ժամը՝ 17.00/ հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հեռախոս 011/514-151/

Փաթեթին ներկայացվող պահանջները՝

Մրցութային փաթեթը բաղկացած է մրցութային առաջարկությունների գրաֆիկական մաս պարունակող պաստառից (բացատրագրով) և տեղեկատվական թերթիկից:

Մրցութային առաջարկությունների գրաֆիկական մասը պետք է ներկայացված լինի տպագրված տեսքով՝ B1 70x100 սմ չափերով պաստառի վրա և էլեկտրոնային Adobe Acrobat (PDF) ձևաչափերով:

Յուրաքանչյուր պաստառ պետք է աջ անկյունում ունենա յոթանիշ նույնականացման ծածկագիր: Նույնականացման ծածկագիրը պետք է լինի «Times New Roman Bold» կամ այլ ստանդարտ տառատեսակով՝ 20մմ տառաչափով:

Յուրաքանչյուր մասնակից պետք է պատրաստի A4 չափի տեղեկատվական թերթիկ (փակ ծրարով): Տեղեկատվական թերթիկը պետք է պարունակի առաջարկի հեղինակի /ների/ ամբողջական անունը /ներ/, կոնտակտային տվյալները՝ ներառյալ փոստային դասիչ, հեռախոսահամար և էլ.փոստի հասցեն: Տեղեկատվական թերթիկում հեղինակները պետք է նշեն աշխատանքին իրենց մասնակցության մասնաբաժինը՝ տոկոսային արտահայտությամբ:

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն Adobe Acrobat (PDF) ձևաչափով:

Առաջարկը պետք է ուղարկել mrcuyt@yerevan.am էլ-փոստին (անհրաժեշտության դեպքում օգտվել WeTransfer կայքից՝ առաջարկների փաթեթների հասանելիությունը պետք է լինի առնվազն 3 օր) վերնագրի դաշտում նշելով նույնականացման յոթանիշ թիվը: Տեղեկատվական թերթիկը պետք է ուղարկել (փակ ծրարով) կցելով նամակին, իսկ նամակի տեքստում տեղադրել առաջարկի բեռնման հղումը:

Ուղարկված փաթեթի վրա չպետք է լինեն որևէ նշումներ, որոնք թույլ կտան նույնականացնել մրցույթի մասնակցին: Նույնականացման տվյալները պետք է նշվեն միայն տեղեկատվական թերթիկում: Սույն պայմանը չպահպանելու դեպքում փաթեթը չի մասնակցի մրցույթին:

Յուրաքանչյուր մեկ մրցութային փաթեթով կարող է ներկայացվել միայն մեկ մրցութային աշխատանք:

Կապ

Հարցերի համար պետք է կապ հաստատել մրցույթի հանձնաժողովի քարտուղարի հետ, mrcuyt@yerevan.am էլ փոստով, հեռախոս +374 011-514-151

Մրցույթի մրցանակը

Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 մլն ՀՀ դրամ, որից՝

- առաջին մրցանակ՝ 2 մլն ՀՀ դրամ,
- երկրորդ մրցանակ՝ 1 մլն ՀՀ դրամ:

Հայեցակարգային հիմնադրույթներն ու նախապայմանները

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝

1. Հայեցակարգը մշակելիս, որպես խրախուսվող նախապայմաններ՝ առաջնորդվել տարածական կազմակերպման հետևյալ սկզբունքներով՝

   1.1 համապատասխան տեխնիկական, ճարտարապետական և գեղարվեստական ձևավորմամբ, արհեստական և բնական լանդշաֆտային կազմավորումների տարրերի կիրառում,

   1.2 բնապահպանական և էներգախնայող հնարքների կիրառում,

   1.3 համապարփակություն, փոխակերպման (տրանսֆորմացման) հնարավորություն, տարբեր համադրություններով հետագա կատարելագործման հնարավորություն,

   1.4 նոր շինանյութերի և տեխնոլոգիաների օգտագործում,

   1.5 տարածքի կազմակերպման վերաբերյալ տարբեր մոտեցումների և այլընտրանքային հայացքների դիտարկում՝ պահպանելով առկա կառույցների («Հրազդան» մարզադաշտը և այլն) պատմական ժառանգությունը, համապատասխանությունը դրանց հետ և շրջակա լանդշաֆտի վերակենդանացումը, զարգացումը՝ դրան տալով ինքնատիպություն և գրավչություն,

   1.6 Ցանկալի է առանձնացված միավորով ծավալային հորինվածքներում նախատեսել նաև գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի մարզաձևի համար ծառայող գոտի,
2. Համալիրի գլխավոր հատակագծի նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել գոտիավորում, այդ թվում՝ գոտիներ (մուտք, հանդիսատես, դրամարկղ, վարչական մասեր, սրահներ, ենթամասեր): Բոլոր ենթագոտիները պետք է փոխկապակցված լինեն այցելուների և անձնակազմի համար կապի և տեխնոլոգիական կապերի միջոցով,
3. նոր կառույցում նստատեղերի քանակն ավելացնելու հնարավորություններ նախատեսել,
4. ստեղծված տրիբունաների շնորհիվ՝ հաշվի առնելով նստատեղերի քանակը, մեքենաների համար նախատեսված կայանատեղիների կազմակերպումը՝ ըստ նախագծման հայեցակարգի և տեխնիկատնտեսական հիմնավորման,
5. հանդիսատեսի և միջոցառումների մասնակիցների համար բարձր

հարմարավետության ստեղծում,

6. տարածքում հաշմանդամություն ունեցող և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության միջոցառումների ապահովում, մուտքի պահանջների բավարարմանն ուղղված անհրաժեշտ կառուցվածքային տարրերի կազմակերպում,
7. սպորտային կառույցի նախագծման և ինժեներական սարքավորումների նորամուծությունների լայն կիրառում,
8. կառույցի տարածքի պլանավորումը պետք է ապահովի հրդեհային ծառայության հատուկ սարքավորումների տեղադրման հնարավորությունը, լուսավորման, գիշերային և տոնական լուսավորման սարքեր, տրանսպորտի և հետիոտնային երթևեկության հարմար կազմակերպում, անհրաժեշտ կանաչապատ ծածկույթի ապահովում,
9. հաշվի առնելով տվյալ սպորտաձևի՝ սպորտային գիմնաստիկայի ժառանգությունը, նոր սպորտդպրոցի կառուցումը ենթադրում է գործառույթների վերականգնում և ընդլայնում, դրա կարողության բարձրացումն ըստ անհրաժեշտության,
10. կառույցի շահագործման համար անհրաժեշտ բոլոր պայմանների ստեղծում՝ հաշվի առնելով տվյալ սպորտաձևի համար համալիրի տեխնոլոգիան, անհրաժեշտ ֆունկցիոնալ տարածքների ամբողջությունը, ինչպես նաև այցելուների համար համապատասխան ենթակառուցվածքի ստեղծումը,
11. հայեցակարգ-նախագիծը կարող է ներառել ցանկացած լուծումներ և տարրեր, առանց նյութերի, տարրերի և մանրամասների սահմանափակման, հաշվի առնել ժամանակակից միտումներն (միջազգային պահանջներ և չափանիշներ) ու շինարարական նյութերը (ընտրությունը հեղինակների հայեցողությամբ)

ՄԱՐԶԱԿԱՌՈՒՑՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ.

Մարզադպրոցը նախատեսված է սպորտային մարմնամարզության ամենօրյա պարապմունքների և նույն ճյուղի միջազգային մրցույթների կազմակերպման համար: Պարապմունքները նախատեսված են, յուրաքանչյուր հերթափոխին, հիմնականում 20-25 մարզիկների համար՝

1. Դահլիճի չափերը 30մx50մ, նվազագույն բաձրությունը 10մ՝ դահլիճ՝ տեղական և միջազգային մրցույթների անցկացման համար, նախատեսելով նաև տրիբունաներ (նշված չափերի մեջ հանդիսատեսի համար նախատեսված տարածքի (տրիբունաների) չափերը չեն ներառվում)
2. Դահլիճի չափերը 25մx50մ, նվազագույն բաձրությունը 10մ՝ մարզումների դահլիճ՝ ամենօրյա պարապմունքներն անցկացնելու համար
3. Նախամուտք և սպասասրահ
4. Բուժկետ
5. Հանդերձարաններ՝ (տղաների և աղջիկների համար), յուրաքանչյուր հանդերձարանի համար նախատեսել մեկական սանհանգույց՝ 1 զուգարանակոնքով, 1լվացարանով և լոգանքի 3 ցնցուղներով:
6. Ամբողջ մարզակառույցի համար անհրաժեշտ է նախատեսել ընդամենը երկու շոգեբաղնիք՝ փոքր լողավազաններով (1-ը աղջիկների, 2-րդը տղաների համար)
7. Մարզիչների սենյակներ՝ (տղամարդկանց և կանանց համար)
8. Ադմինիստրացիոն սենյակներ
9. Ֆեդերացիայի համար նախատեսված սենյակներ
10. Պահեստներ
11. Տեխնիկական սենյակներ

Ցանկալի է առանձնացված միավորով ծավալային հորինվածքներում նախատեսել նաև գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի մարզաձևի համար ծառայող գոտի:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԿՐՈԲԱՏԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՅԻ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

- Մարզումային 1 մարզադահլիճ 24մx15մx9մ
- մարզական գոտիներ 4 հարթակ՝ յուրաքանչյուրը (14x14 մետր) ներառված է նաև անվտանգության գոտին՝ չորս հարթակների միջև 2-3 մ, մարզվողների միաժամանակյա մարզումային պայմաններն ապահովելու նպատակով
- Մարզումային մարզադահլիճներին կից 2 հանդերձարաններ (1-ը տղաների, 1-ը աղջիկների համար), յուրաքանչյուրում 30 հանդերձապահարաններ: Յուրաքանչյուր հանդերձարանում՝ մեկական սանհանգույց 2-ական զուգարանակոնքերով, 2 լվացարաններով և 1-ական լոգարանով՝ 3-ական ցնցուղներով:
- Մարզչական երկու հանդերձարաններ (1-ը տղամարդկանց, 1-ը կանանց համար) յուրաքանչյուրում՝ 1 լվացարան, 1 զուգարանակոնք և 1 ցնցուղ:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ՝

1. Բացատրագիր
2. Գլխավոր հատակագծեր՝ շենքի տեղադրումով և հարակից միջավայրի բարեկարգման հայեցակարգով,
3. Տրանսպորտային և հետիոտնային սխեմա,
4. Բարեկարգման և կանաչապատման սխեմա,
5. Շենքի հատակագծեր,
6. Կտրվածքներ,
7. Ճակատներ,
8. Պատկերավորում՝3-4 հատ արտաքին տարածքներից (ընդհանուր և տեղային հեռանկարներ),
9. Ծրագրի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝ կանաչապատման մակերես, կառուցապատման մակերես, կառուցապատման գործակից, կառույցի ընդհանուր շինարարական մակերես, տրիբունաներում տեղերի քանակ, կայանատեղերի քանակ,
10. Նախագիծը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով, նաև PDF ձևաչափով: (մասշտաբները մրցույթի մասնակիցների հայեցողությամբ՝ մրցութային նախագծերը ներկայացվում են գաղափարն առավել ընկալելի դարձնելու և շահեկան մատուցելու ձևաչափով)

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ՝

1. Գեոդեզիական հանույթը dwg ձևաչափով և PDF ձևաչափով
2. Դահլիճների տեխնոլոգիական կահավորմանը վերաբերվող նյութ
3. Կազմված տեղեկանք և սխեմաներ տվյալ գոտու վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՅԱՆ